Նկարադարան

ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

Լուսաբանում

«Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն» հիմնադրամում սեմինար- դասընթաց

2022 թվականի մարտի 29-ին ՀՀ ԿԳՄՄՆ «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ – ի «Վերականգնող էներգիայի և էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և ապասարկում» մասնագիտության I կուրսի ուսանողները, վարպետի գլխավորությամբ, իրենց արտադրական ուսուցումն իրականացրեցին «Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն» հիմնադրամում:

Հիմնադրամի տնօրեն Խ. Սահակյանի և ուսումնարանի վարպետ Կ. Առաքելյանի կողմից առաջին կուրսեցիների համար մատուցվեց տեսական դասընթաց՝ արևային ջրատաքացուցիչների և ինվերտորների կառուցվածքի վերաբերյալ, ուսանողները նաև կարողացան մասնակցել ֆոտովոլտային կայանների տեղադրման և մոնտաժման աշխատանքներին, ծանոթացան ֆոտովոլտային մարտկոցների անվտանգ տեղափոխման կարգին:

Իրականացված դասը բավականին կարևոր և օգտակար էր ուսանողների գործնական և մասնագիտական հմտությունները զարգացնելու և կատարելագործելու համար, քանի որ «Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն» հիմնադրամը զգալի ներդրում ունի երկրում վերականգնվող էներգետիկայի, էներգախնայողության և բնապահպանական գաղափարների ու տեղեկատվության տարածման, մասնագետների վերապատրաստման գործում:

Դասավանդող՝ Կ. Առաքելյան

Նկարադարան

ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

Ծրագիր

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ
<Ճիշտ գրելու, ճիշտ խոսելու գաղտնիքները>
խորագրով համատեղ բաց դասի

ԾՐԱԳԻՐ

Առարկա՝ հայոց լեզու, ռուսերեն, անգլերեն
Թեմա՝ <Ուղղագրություն, ուղղախոսություն , ոճաբանություն>

Դասի նպատակը.

- ուսանողներին ծանոթացնել ուղղագրական, ուղղախոսական և ոճական այն առանձնահատկություններին, որոնք բնորոշ են ռուսերենին, անգլերենին, հայերենին
- օրինակների միջոցով ներկայացնել խոսքի մեջ հաճախակի հանդիպող լեզվառոճական սխալները
- նպաստել ուսանողների գրավոր և բանավոր խոսքի զարգացմանը, ուղղագրական և ուղղախոսական կանոնների ճիշտ կիրառմանը

Նախապատրաստական աշխատանքներ.

- նախօրոք ուսանողներին բաժանել երեք խմբի, հանձնարարել ուսումնասիրել հայերենի, ռուսերենի, անգլերենի ուղղագրական կանոնները,
- խմբավորել և համեմատական անցկացնել երեք լեզուների նույնանման ուղղագրական կանոնների միջև
- կազմել գծապատկերներ՝ ընտրված ուղղագրական կանոններով
- գրել օրինակներ առօրյա խոսքում հանդիպող արտասանական և ոճական սխալների վերաբերյալ

Դասի կահավորումը—տառաթներ լեզվի մասին, պատառա՝ լեզուների տոհմածառը

Դասի ընթացք.

- բացման խոսք
- հնդեվրոպական տոհմածառի ներկայացում
- ուղղագրական, ուղղախոսական , ոճաբանական կանոնների առանձնահատկությունների ներկայացում՝ երեք լեզուներով և համեմատականների անցկացնում
- գիտելիքների ստուգման և ամփոփման փոխ. աշխատանք տեքստի վրա՝ ուղղել բառագործածության սխալները /երեք լեզուներով/

Ակնկալվող արդյունք.

- Ուղղագրական և ուղղախոսական կանոնների առանձնահատկություններին ծանոթ, տվորածը բանավոր և գրավոր խոսքում կիրառել կարողացող ուսանողներ:

Հումանիտար մեթոդմիավորում

Լուսաբանում

<Ճիշտ գրելու, ճիշտ խոսելու գաղտնիքները> խորագրով բաց դասի

Սույն թվականի մարտի 31-ին Գյումրու թիվ 4 ուսումնարանում անցկացվեց եռալեզու բաց դաս՝<Ճիշտ գրելու, ճիշտ խոսելու գաղտնիքները> խորագրով: Դասը կազմակերպել էին հայոց լեզվի դասախոս Ք. Գրիգորյանը, ռուսաց լեզվի դասխոս Ն .Մանուկյանը, անգլերենի դասախոս Մ.Եգանյանը:

Դասի նպատակն էր առաջին կուրսի ուսանողներին ծանոթացնել ուղղագրական, ուղղախոսական և ոճական այն առանձնահատկություններին, որոնք բնորոշ են հայոց, ռուսաց, անգլերեն լեզուներին: Օրինակների միջոցով ներկայացնել խոսքի մեջ հաճախակի հանդիպող լեզվառճական սխալները: Նախօրոք ուսանողներին տրվել էր հանձնարարություն՝ խմբավորել և համեմատականներ անցկացնել երեք լեզուների նույնանման ուղղագրական, ուղղախոսական, ոճական կանոնների միջև:

Դասասենյակը կահավորված էր թեմային համապատասխան պաստառներով, գծապատկերներով, խորհրդանշանային նյութերով:

Խմբերը ներկայացրին իրենց աշխատանքները երեք լեզուներով: Սահիկաշարի վրա բացատրեցին ուղղագրական, ուղղախոսական կանոնների նմանություններն ու տարբերությունները: Լեզուների տոհմածառի վրա նշեցին հնդեվրոպական լեզվաընտանիքում հայոց լեզվի տեղը, խոսեցին հայոց այբուբենի առանձնահատկությունների մասին: Դասի ավարտին ծավալվեց քննարկում՝ առօրյա խոսքի վերաբերյալ: Ուսանողները բերեցին օրինակներ, ուղղեցին ոճական սխալները և եկան այն եզրակացության, որ յուրաքանչյուր մարդու համար կարևոր նշանակություն ունի գրագետ ու գեղեցիկ խոսքը:

Կազմակերպիչներ՝ Ք.Գրիգորյան
Ն.Մանուկյան
Մ.Եգանյան

Նկարադարան

ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

Ծրագիր

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Բաց դասի պլան

Մասնագիտություն՝ «Ոսկերչություն՝ ոսկերիչ»
Կուրս՝ I
Անցկացման ամսաթիվ՝ **Ապրիլ,** 2022թ.
Թեմա՝ «Արծաթագործ հայ վարպետների զարմանահրաշ գործերը»

Նպատակ

- Կարևորել արծաթագործությունը՝ որպես ազգային ինքնության պահպանման միջոց
- Հարստացնել ուսանողների մասնագիտական գիտելիքները
- Ներկայացնել հայ ոսկերիչ-արծաթագործների ինքնատիպ գործերը
- Ճանաչել գյումրեցի արվեստագետ ստեղծագործողներին
- Արժևորել ընտրած մասնագիտությունը

Դասի կահավորումը. պրոյեկտոր, համակարգիչ

Նախապատրաստական աշխատանքներ
Ուսանողներին հանձնարարել ուսումնասիրել հետևյալ թեմաները, մշակել անհրաժեշտ տեղեկույթ.
- «Արծաթագործությունը Հայաստանում և ոսկերչության արվեստի կենտրոնները»
- «Հին և ժամանակակից զարդերի խաչմերուկներում»
- «Հայ ոսկերիչ-արծաթագործների ինքնատիպ գործերը», «Գյումրեցի արվեստագետ ստեղծագործողները»

Ընթացք
Տեղեկատվության հաղորդում
- Ներկայացնել վերը նշված թեմաների շուրջ հագեցած տեղեկատվություն՝ բերելով տիպիկ օրինակներ/տեսանյութ, տեսահոլովակ, սահիկաշար/:
- Կատարել մասնագիտական քննարկում՝ առանցքային կետում պահելով «ոսկերչությունը որպես արհեստ-արվեստ» տեսակետը
- Լսել ուսանողների կարծիքներն ու տեսակետները արծաթագործ հայ վարպետների զարմանահրաշ գործերի մասին՝ մատնանշելով ամենատարբերվողը և առանձնահատուկը

Ակնկալվող արդյունք
Լրացուցիչ մասնագիտական գիտելիքներով հարստացած, տրամաբանող և մասնագիտությունը արժևորող ուսանողներ:

Դասավանդող՝ Խ Եղիազարյան

Լուսաբանում

«Արծաթագործ հայ վարպետների զարմանահրաշ գործերը»
թեմայով բաց դասը

2022թ. ապրիլի 5-ին «Ոսկերչություն» մասնագիտության I կուրսում անցկացվեց «Արծաթագործ հայ վարպետների զարմանահրաշ գործերը» թեմայով բաց դասը։ Բաց դասի նպատակն էր կարևորել ոսկերչությունը՝ որպես ազգային ինքնության պահպանման միջոց, ներկայացնել հայ ոսկերիչ-արծաթագործների ինքնատիպ գործերը, ճանաչել գյումրեցի արվեստագետ ստեղծագործողներին։

Բաց դասը սկսվեց իրար հաջորդող կարճամետրաժ տեսանյութերի ցուցադրմամբ, որոնք գրագետ մեկնաբանվում էին ուսանողների կողմից։ Կարևորելով արծաթագործությունը որպես հարուստ մշակութային ժառանգություն և դեկորատիվ կիրառական արվեստի հնագույն և տարածված տեսակ՝ ուսանողները հանդես եկան պատմական հակիրճ ակնարկով։ Մանրակրկիտ ներկայացվեց արծաթագործ հայ վարպետներ Մամիկոն Միխիթարյանի ձեռագործ աշխատանքները՝ հայկական ավանդական սպասք, գրակալներ, եկեղեցական գրքի կազմեր, մասունքատուփեր և այլ արժեքավոր արծաթյա իրեր, զարդեր։ Դրանք արծաթագործ վարպետի լավագույն մտահաղացումներն իրեղեն արժեքի վերածելու ակներև փաստն էին։ Անդրադարձ կատարվեց նաև ժամանակակից գյումրեցի արհեստագործ վարպետ Ցոլակ Կոշտոյանի ձեռակերտ աշխատանքներից մանրաքանդակ «կլկլանին», որը պատվախնդիր գյումրեցու ավանդական մուշուրբան էր։

Տարբերվող և առանձնահատուկ էին ցուցադրվող «Կառա» բրենդի զարդերը, որոնք ամբողջացնելով մարդ անհատի կերպարը, իր ասելիքն ու պատմությունն էին պատմում յուրաքանչյուր օտարերկրացու։

Բաց դասն ավարտվեց գյումրեցի հյուրի՝ արվեստագետ-մետաղագործ Մամիկոն Միքայելյանի եզրափակիչ խոսքով, ով հանդես եկավ ուսանողներին ոգևորելու իր լակոնիկ խոսքով։ Վերջինիս համար հաջողությունների հասնելու գաղտնիքը նպատակասլացությունն է և աշխատանքի մեջ սեր ներդնելու միտումը։

Դասավանդող՝ Խ. Եղիազարյան

Նկարադարան

ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

Լուսաբանում

Ցուցահանդես վաճառք «ԵՄ հանուն մշակույթի. առավել ուժեղ համայնքներ և տեղական նախաձեռնություններ» ծրագրի շրջանակներում

Ապրիլի 9-ին և 10-ին ՀՀ ԿԳՄՍՆ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի ուսանողները իրենց ստեղծագործական աշխատանքներն էին ներկայացրել Միհեր Մկրտչյան հուշատուն - թանգարանում՝ կազմակերպելով ցուցահանդես վաճառք։
Միջոցառումն իրականացվեց «ԵՄ հանուն մշակույթի. առավել ուժեղ համայնքներ և տեղական նախաձեռնություններ» ծրագրի շրջանակներում։
Ուսանողները 2019թ. սեպտեմբերի 23-ից հոկտեմբերի 2-ն ընկած ժամանակահատվածում մասնակցել են «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն - ՍԻՎԻՏԱՍ» ՀԿ-ի կողմից կազմակերպված «Երիտասարդների առաջնորդության և մասնակցության մոդուլի» փորձարկման դասընթացին, որի նպատակն էր ծանոթանալ հանրային քաղաքականության ուսումնասիրմանը, հիմնախնդիրների բացահայտման ձևերին և առաջարկել լուծումներ, մշակել ծրագրեր, հանդես գալ նոր նախաձեռնություններով։
2020 թվականի հունիսից ուսումնարանում իրականացվեցին Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող և «Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի», «Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի», ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն- ՍԻՎԻՏԱՍ ՀԿ-ի և «Թանգարանների աշխատողների և ընկերների ասոցիացիայի» հետ համատեղ իրականացվող, «ԵՄ հանուն մշակույթի. առավել ուժեղ համայնքներ և տեղական նախաձեռնություններ» ծրագրի շրջանակներում տրամադրված ենթադրամաշնորհների՝ «Արժեքված արհեստներ» և «Զբոսաշրջությունը Գյումրիում» ենթադրամաշնորհային ծրագրերը։

Ծրագրերի մասնակիցները հետազոտել և տեղեկատվություն են հավաքել Գյումրուն բնորոշ զարդանախշերի և ճանաչված արվեստագետների մասին, ձեռք են բերել գործիքներ և նյութեր, պատրաստել տեղեկատվական թերթիկներ, ցուցանակ, շապիկներ, Միհեր Մկրտչյանին, Հովհաննես Շիրազին և Գյումրուն բնորոշ հուշանվերներ։

Ուսանողները կիսվեցին իրենց տպավորություններով և հույս հայտնեցին, որ այս ծրագիրը նախադեպ կդառնա Գյումրու արհեստավորների համար՝ համագործակցելու, սեփական արվեստը հանրությանը մատուցելու, Գյումրիում զբոսաշրջությունը խթանելու առումով։
Միջոցառման ավարտին նրանք թանգարանին նվիրեցին «Գյումրի» և «Միհեր Մկրտչյան» խորագրերով վիտրաժային աշխատաքներ։

Տեսանյութի կազմակերպատարտիարակչական գծով տեղակալ՝ Անուշ Մկրտչյան

Նկարադարան

ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

Ծրագիր

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Միջոցառման պլան

Այցելություն Ասլամազյանների տուն-թանգարան

Կուրս- 1

Առարկա – Հասարակագիտություն

Կազմակերպիչ՝Ա.Աղաբաբյան

Անցկացման ժամանակը ապրիլ

Այցելությունը կազմակերպվում է հասարակագիտություն առարկայի <Գեղագիտություն> բաժնի ուսումնասիրման ընթացքում՝ գեղեցիկի ընկալումը ուսանողներին ավելի պատկերավոր դարձնելու համար:

Այցելության նպատակը.

- Ուսանողներին ծանոթացնել արվեստի արտահայտչաձևերից՝ գեղանկարչության հետ:
- Ամրապնդել ստացած գիտելիքները <Գեղագիտություն> թեմայից:
- Սովորողների մոտ ձևավորել գեղագիտական ճաշակ, սեր արվեստի և գեղեցիկի հանդեպ:
- Ծանոթացնել մշակութային քաղաքի՝ Գյումրու արվեստի երախտավորներից Ասլամազյան քույրերի կյանքին և ստեղծագործություններին:

Ակնկալվող արդյունք.

- գեղագիտական ճաշակ ունեցող,
- գեղեցիկ արժեվորող, գեղանկարչության ոճերը տարբերակող,
- գյումրեցի արվեստագետներին ճանաչող և նրանց աշխատանքները գնահատող ուսանողներ:

Հումանիտար մեթոդմիավորում

Լուսաբանում

Այցելություն Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի թանգարան

2022 թվականի ապրիլի 15-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի առաջին կուրսերի ուսանողներն այցելեցին Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի թանգարան:

Այցելությունը կազմակերպվել էր հասարակագիտություն առարկայի «Գեղագիտություն» բաժնի ուսումնասիրման շրջանակներում՝ գեղեցիկի ընկալումը ավելի պատկերավոր դարձնելու համար:

Թանգարանի գիդը հանգամանորեն ներկայացրեց Ասլամազյան քույրերի կյանքն ու գործունեությունը, ծանոթացրեց յուրաքանչյուր սրահում ցուցադրված աշխատանքների թեմատիկային, գեղանկարչության և քանդակագործության նմուշներին: Իրենց ինքնատիպությամբ ուսանողներին հատկապես գրավեցին Ասլամազյան քույրերի կողմից ստեղծված խեցեգործական աշխատանքները, դիմանկարները, ինքնանկարները և քույրերի անձնական օգտագործման իրերը:

Այնուհետև ուսանողների հետ քննարկում ծավալվեց՝ թանգարանում ներկայացված նմուշների վերաբերյալ:

Կազմակերպիչ՝ Ա. Աղաբաբյան

Նկարադարան

ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

Ծրագիր

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Բաց դաս մաթեմատիկայից

Թեմա. «Մաթեմատիկայի զարգացման պատմությունը»

Առարկա՝ մաթեմատիկա

Կուրս ----------

Դասի նպատակը.

1. Ճանաչել և գնահատել մաթեմատիկայի դերը մարդու կյանքում:
2. Ընդլայնել ուսանողների իմացության մտահորիզոնը:
3. Ծանոթացնել մաթեմատիկայի զարգացման պատմությանը:
4. Զնավորել հանրահաշվի և երկրաչափության մեջ գեղեցիկը տեսնելու կարողություններ:
5. Ստեղծել միջառարկայական կապ:

Նախապատրաստական փուլ՝

- ✓ Նախապես հանձնարարել լրացուցիչ աղբյուրներից հավաքել տեղեկություններ,
- ✓ պատրաստել թեմային համապատասխան զեկույցներ, լուսաբանող նյութեր և սահիկաշար:

Ընթացքը.

Մասնակիցները ներկայացնում են թեման հետևյալ ենթաթեմաներով՝

- մաթեմատիկայի ստեղծման նախադրյալները
- Հին Հունաստան. Պյութագորասի դպրոց
- մաթեմատիկայի զարգացումը Հայաստանում, հայ մաթեմատիկոսները

Անհրաժեշտ պարագաներ՝ համակարգիչ, լուսածիր, կրիչ:

Ակնկալվող արդյունք.

Գնահատել և արժևորել մաթեմատիկայի դերը մեր կյանքում:

Պատասխանատու՝ **Ժ. Բարսեղյան**

Լուսաբանում

«ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»

Սույն թվականի մայիսի 5-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում անցկացվեց բաց դաս մաթեմատիկայից՝«Մաթեմատիկայի զարգացման պատմությունը» խորագրով: Դասի նպատակն էր ճանաչել և գնահատել մաթեմատիկայի դերը մարդու կյանքում, ընդլայնել ուսանողների իմացության մտահորիզոնը, ծանոթացնել մաթեմատիկայի զարգացման պատմությանը, ձևավորել մաթեմատիկայի մեջ գեղեցիկը տեսնելու ու գնահատելու կարողություններ, ստեղծել միջառարկայական կապ:

Թեման ներկայացվեց «Մաթեմատիկայի ստեղծման նախադրյալները», «Մաթեմատիկան Եվրոպայում միջին դարերում և վերածնունդի շրջանում», « Մաթեմատիկայի զարգացումը Հայաստանում», « Հայ մաթեմատիկոսները» ենթաթեմաներով:

Դասը սկսվեց Գալիլեյո Գալիլեյի խոսքերով. «Տիեզերքը հնարավոր չէ կարդալ, քանի դեռ մենք չենք սովորել լեզուն և չենք ծանոթացել սիմվոլներին, որոնցով դրանք գրվում են: Այն գրվում է մաթեմատիկական լեզվով»:

Մասնակիցները հետաքրքիր զուգահեռներ անցկացրին երկրաչափության, բնության և գիտության օրինաչափությունների միջև: Բեմական խաղով ներկայացվեց Պյութագորասի դպրոցն՝ իր օրենքներով, Պյութագորասի փիլիսոփայությունն իր բոլոր կետերով, ինչպես նաև ժամանակակից աստղագետ Էլյա Հովհաննիսյանի մշակած գիտական մաթեմատիկական գրաֆիկը՝ կյանքի անցումային փուլերի վերաբերյալ :

Ուսանողները կարողացան ինքնուրույն կատարել վերլուծություններ՝ օգտագործելով դիդակտիկ նյութեր, բանաձևեր և սահիկաշար:

Ամփոփելով դասը՝ ուսանողներն առաջարկեցին մաթեմատիկան սովորելու մի քանի կանոններ, որոնց շնորհիվ հնարավոր կլինի հասկանալ մաթեմատիկայի լեզուն, ճանաչել բնությունն՝ իր կենդանի և անկենդան բաղադրիչներով:

Պատասխանատու՝ Ժ. Բաբսեղյան

Նկարադարան

ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

Լուսաբանում

«Գագարինի համաստեղություն» մրցույթ

ՌԴ Սարատովի Յու. Գագարինի անվան պետական տեխնիկական համալսարանի՝ Գագարինի VII միջազգային փառատոնի շրջանակներում կազմակերպված «Գագարինի համաստեղություն» ստեղծագործական գեղարվեստական աշխատանքների մրցույթում ուսումնարանի <Ոսկերիչություն> մասնագիտության II կուրսի ուսանող Սամվել Ղազարյանը և <Գեղանկարչություն և քանդակագործություն> մասնագիտության III կուրսի ուսանող Տիգրան Ձվակերյանը <Դեկորատիվ-կիրառական արվեստ> անվանակարգում ճանաչվեցին հաղթողներ և արժանացան պատվոգրերի:

Նկարադարան

ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

Նկարադարան

ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

ГРАМОТА
НАГРАЖДАЕТСЯ
Мкртчян
Степан Мкртичевич
VII МЕЖДУНАРОДНОГО ГАГАРИНСКОГО ФЕСТИВАЛЯ

ДИПЛОМ
НАГРАЖДАЕТСЯ
Казарян Самвел
за I место
VII МЕЖДУНАРОДНОГО ГАГАРИНСКОГО ФЕСТИВАЛЯ

ДИПЛОМ
НАГРАЖДАЕТСЯ
Дзвакерян Тигран
за II место
VII МЕЖДУНАРОДНОГО ГАГАРИНСКОГО ФЕСТИВАЛЯ

ГРАМОТА
НАГРАЖДАЕТСЯ
Багдасарян
Арам Джанибекович
VII МЕЖДУНАРОДНОГО ГАГАРИНСКОГО ФЕСТИВАЛЯ

Նկարադարան

ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

Նկարադարան

ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

Նկարադարան

ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

Նկարադարան

ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

Նկարադարան

ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

Նկարադարան

ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

Նկարադարան

ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ